

Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությանը դրամաշնորհի տրամադրման

ք. Երևան

«19» հունվարի» 2022 թ.

«Քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի նախագահ՝ Արմեն Ղուլարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Մարկ Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով ««2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ««2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի ««Քաղաքաշինության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 748-Լ որոշումներով, ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 02 դասի «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծախսային ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը, (այսուհետ՝ Պայմանագիր), հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել իր կանոնադրությամբ հաստատված գործառույթներն ու պարտականությունները՝ ճարտարապետության, քաղաքաշինության և շինարվեստի պատմության, տեսության, գործնականին, անհատ ճարտարապետների ստեղծագործություններին, նախագծային արվեստանոցների և ինստիտուտների, ոլորտի գիտաուսումնական հիմնարկների, ինչպես նաև արտերկրի և արտերկրի հայ ճարտարապետների գործունեությանը վերաբերվող տարաբնույթ նյութերի հավաքում, ուսումնասիրում, պահպանում, մասսայականացում, ցուցադրություն և այլ գործառույթներ (միջոցառումներ)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող՝

- 1.1.1 2022 թվականին կանխատեսվող ոչ ֆինանսական ցուցանիշների՝ հավելված N 1:
- 1.1.2 Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված N 2:
- 1.1.3 Հանձնման-ընդունման ակտի՝ հավելված N 3 և աղյուսակ 3.1, որոնք կազմվում են ՀՀ ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի N 346-Ն հրամանի համաձայն:
- 1.1.4 Ծախսերի նախահաշվի՝ հավելված N 4:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է դրամաշնորհի հատկացման ձևով՝ ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ««2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման N 3 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 02 դասի «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրով ՀՀ քաղաքաշինության կոմիտեին նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում՝ **55,688.5** (Հիսունհինգ միլիոն վեց հարյուր ութսունոթ հազար հինգ հարյուր) հազար դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

- 2.1.1 Ցանկացած ժամանակ, առանց որևէ սահմանափակումների ստուգել կազմակերպության կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքն՝ առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերի):
- 2.1.2 Վերահսկել սույն պայմանագրով կազմակերպությանը հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:
- 2.1.3 ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ««2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 3.3 կետով նախատեսված տուգանքը:
- 2.1.4 Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին:
2.1.5 Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Կոմիտեն պարտավորվում է՝

2.2.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ կազմակերպությունից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված պայմանագրային պարտավորությունները:

2.2.2 Ստորագրել սույն պայմանագրի 1.1.3 ենթակետում նշված հանձնման-ընդունման ակտը՝ կազմակերպության կողմից սույն պայմանագրով սահմանված բոլոր պարտավորությունները պատշաճ ձևով կատարելու դեպքում:

2.2.3. Սահմանված կարգով կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական օգնություն:

2.2.4 Կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:

2.2.5 Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 10 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Կոմիտեն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.3 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.3.1 Կոմիտեից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները պատշաճ ձևով և կարգով կատարված պայմանագրային պարտավորությունների դիմաց:

2.3.2 Կոմիտեի կողմից վճարման ենթակա գումարները պայմանագրով սահմանված ժամկետում չվճարվելու դեպքում՝ պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ժամանակին, պատշաճ ձևով և կարգով կատարել սույն պայմանագրի 1.1 կետում նշված գործառույթները՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները Կոմիտեի կողմից ընդունվելուց հետո, միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողություններ/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.3 ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների: Եթե վերը նշված հատկացումների շրջանակում իրականացվող ծրագրերը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

2.4.4 Մինչև 2022 թվականի հունվարի 31-ը պետական մարմին ներկայացնել տեղեկատվություն սույն պայմանագրի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:

2.4.5 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.6 Կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.7 Սույն պայմանագրով սահմանված կարգով Կոմիտե ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:

2.4.8 Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.9 Կոմիտեի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Կոմիտեի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.10 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ